ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 243 -Ա «16» 03 2023 թ.

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻՆ ԱՆԱՆՈՒՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 2-ի N 16-Ն հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետի 6-րդ ենթակետի պատանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի որակավորման տարակարգի շնորհման համար ծնողների կողմից մանկավարժական աշխատողին անանուն գնահատման հարցաթերթիկը՝ համաձայն Հավելվածի:
2. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի մամուլի քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Մանուկյանին՝ հաստատված հարցաթերթիկը տեղադրել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքում:

Recoverable Signature

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի

2023 թվականի մարտի 16-ի

N 243 Ա հրամանի

Հարցաթերթիկ

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողի որակավորման տարակարգի շնորհման համար ծնողների կողմից մանկավարժական աշխատողին անանուն գնահատման

Մարզը՝----------

Համայնքը՝ _____

Հաստատությունը՝ ----------

Հաստիքը՝ ----------

Մանկավարժական աշխատողը՝ ----------

1. Մանկավարժական աշխատողի մասին երեխաս. (կարող եք ընտրել 1 տարբերակ)

- դրական է արտահայտվում.
- բացասական է արտահայտվում.
- չի արտահայտվում:

2. Ընտրե՛ք մանկավարժական աշխատողին առավել բնութագրող բառերը. (կարող եք ընտրել 4 տարբերակ)

- հոգատար
- անուշադիր
- խստապահանջ
- բարեհամբույր
- անտարբեր
- կողմնակալ
- նրբանկատ
- աջակցող
- արդարամիտ
- կոպիտ

3. Իմ ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի հետ կազմակերպվող աշխատանքներում. (կարող եք ընտրել 1 տարբերակ).

- պարբերաբար ընդգրկվում եմ համատեղ գործունեության տարբեր ձևերում.
- հազվադեպ եմ ընդգրկվում համատեղ գործունեության տարբեր ձևերում.
- չեմ ընդգրկվում համատեղ գործունեության որևէ ձևում:

4. Օրվա կանոնակարգային տարբեր պահերի ընթացքում երեխայիս ներգրավվածության մասին. (կարող եք ընտրել 1 տարբերակ)

- բավարար չափով տեղեկացված եմ.
- մասամբ եմ տեղեկացված.
- տեղեկացված չեմ:

5. Երեխայիս նկատմամբ վերաբերմունքը. (կարող եք ընտրել 3 տարբերակ)

- արդարամիտ է.
- անարդար է.
- խրախուսող է.
- պատժող է.
- օգնում է լրացնել բաց թողածը.
- անտեսում է խնդիրները.
- բացատրում է՝ ինչպես բարելավել արդյունքները:

6. Երեխայիս հետ աշխատելու ընթացքում. (կարող եք ընտրել 1 տարբերակ)

- բացահայտում է նրա ներուժը և զարգացնում կարողությունները.
- չի բացահայտում նրա ներուժն ու կարողությունները.
- հիմնվում է նրա բացթողումների և թերացումների վրա:

7. Երեխայիս զարգացման և դաստիարակության կրթության հարցերով մանկավարժական աշխատողի հետ համագործակցելիս. (կարող եք ընտրել 1 տարբերակ)

- հաճախ եմ խորհրդակցում նրա հետ.
- չեմ խորհրդակցում նրա հետ.
- նա հաշվի է առնում երեխայիս մասին իմ դիտարկումներն ու առաջարկությունները.
- նա հաշվի չի առնում իմ դիտարկումներն ու առաջարկությունները: